ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ‘ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ’ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

01.05.2014 07:22

Հարգելի փաստաբաններ,
Շնորհակալություն ենք հայտնում ‘Հայաստանում ֆրանսիական համալսարան’ հիմնադրամում իրականացնող իրավաբանական կլինիկայի ծրագրին Ձեր ցուցաբերած հետաքրքրության համար: Մենք մտադիր ենք ծրագիրը սկսել 2014 թվականի սեպտեմբերից, հետևաբար մինչև ս.թ. օգոստոս ամիսը պետք է հստակեցնենք մասնակիցների ցանկը և ուսումնական ծրագիրը:
Ծրագիրը կարող է ներգրավել քաղաքացիական, վարչական, քրեական, գործարարական իրավունքի կամ Ձեր առաջարկությամբ՝ իրավունքի այլ ոլորտ: Հիշեցնենք, որ իրավաբանական կլինիկայի նպատակը ուսանողական գործնական գիտելիքներով ապահովելն է: ‘Կլինիկական իրավաբանական կրթությունը’ կենտրոնանում է հմտություններ սովորացնելու մոտեցման վրա, որի համար բացի շաբաթական դասընթացներից, ուսանողները պետք է հնարավորություն ունենան նաև գործնական աշխատանք կատարել, օրինակ՝ պայմանագիր կազմել կամ վերանայել, հայցադիմում կազմել, հաճախորդին նամակ գրել, ուսումնասիրություն անել և այլն:
Իրավաբանական կլինիկայում դասավանդելու համար Ձեզանից շաբաթական մոտ 3-4 ժամ կպահանջվի: Յուրաքանչյուր շաբաթ կկայանա մեկ դասընթաց 1-2 ժամ տևողությամբ: Ծրագրին մասնակցող փաստաբանից ակնկալվում է շաբաթը մեկ անգամ 10 ուսանողից բաղկացած խմբում անցկացնել համապատասխան պարապմունքներ: Առանձին դեպքերում հնարավոր է դասընթացների անցկացումը փաստաբանական գրասենյակում: Դուք պետք է կարողանաք ժամանակ տրամադրել ուսանողների կատարած աշխատանքը ստուգելու և մեկնաբանելու համար:
Իրավաբանական կլինիկայում դասավանդելու պայմաններից է նաև փաստաբանական գործունեության առնվազն 8 տարվա փորձ ունենալը:
Եթե դուք համապատասխանում եք այս պայմաններին և դեռ ցանկություն ունեք մասնակցելու կլինիկայի ծրագրին, խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրությունը (CV) և նշել նաև, թե իրավունքի, որ ոլորտում ունեք կլինիկական դասընթացը վարելու հետաքրքրություն: Խնդրում ենք հայտերը ներկայացնել մինչև 2014թ. մայիսի 9-ը:
Բոլոր պատասխանները ստանալուց հետո մենք հանդիպում կկազմակերպենք, որտեղ կհստակեցնենք, ծրագրին մասնակցության հետ կապված հարցերը և հայտ ներկայացված անձանց կողմից իրականացվող կլինիկական ծրագրերի ոլորտները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })